ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1918–1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը չսահմանափակվեց միայն արևմտահայերի 1915–1916 թթ. զանգվածային կոտորածներով ու տեղահանությամբ: Այդ քաղաքականությունը շարունակվեց իրականացվել նաև արևելահայերի նկատմամբ՝ 1918–1920 թթ.: Այդ ժամանակահատվածում Թուրքիայի և մուսավաթական Ադրբեջանի կողմից կոտորածի ու տեղահանության ենթարկվեց Բաքվի նահանգի հայությունը:

Վերագրավելով Արևմտյան Հայաստանը՝ թուրքական զորքերն արշավեցին Այսրկովկաս: Թուրքական 3-րդ և 4-րդ զորախմբերի՝ 1918 թ. մայիսին Սարդարապատի, Բաշ Ապարանի մարտերում ունեցած անհաջողություններից և Ղարաքիլիսայի գրավումից հետո երկրորդ զորախումբը Ջաջուռ–Համամլու–-Ղարաքիլիսա–Դիլիջան–Ղազախ–Ելիզավետպոլ գծով արշավեց Բաքու:

Թուրքերի մուտքը Բաքու մեծ օժանդակություն ստացավ Գանձակում գտնվող Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության մուսավաթական նորաստեղծ կառավարության (նախագահ՝ Մ. Ֆաթալի Խան-Խոյսկի) կողմից: Թուրք-մուսավաթական համագործակցությունն ավելի ակնառու դարձավ, երբ մայիսի 27-ին Մոսուլից Գանձակ ժամանեց Կովկասյան թուրքական բանակի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Նուրի փաշան: Մայիսի վերջերին Բաքվի ճակատում գտնվող թուրքական ուժերի ընդհանուր թիվն արդեն հասնում էր 18–20 հազարի և օրեցօր ավելանում էր: 1918 թ. մայիսին Գանձակում Ադրբեջանի կառավարության ու Մուսավաթ կուսակցության գործիչների գաղտնի խորհրդակցության ժամանակ մշակվեցին Նուխիի, Արեշի, Գյոքչա, Շամախի և Բաքվի գավառների հայերի կոտորածների ծրագրեր: Այս առումով ուշագրավ է կոտորածներից առաջ Նուխիի, Շամախու և Բաքվի քաղաքապետերին Ադրբեջանի Հանրապետության ներքին գործոց նախարար Բեհբուդ Խան-Ջիվանշիրի տված գաղտնի հրամանը, ուր ասված էր.«Անհրաժեշտ է ոչնչացնել հայերը, անոնց դիակների վրայեն անցնելու մեր նպատակներուն հասնելու համար: Մի խնայեք ոչ ոքի և հավատարմորեն կատարեցեք ձեզի տրված հրահանգները»[1]:

Բաքվի ինքնապաշտպանությունը, որն առանձնահատուկ տեղ է գրավում Առաջին աշխարհամարտի ռազմական գործողությունների մեջ, ուներ վճռորոշ

---

[1] *Ա վ ո. Միսաք Թոռլաքյան.– Հեղափոխական ալպոմ (Ազատագրական պայքարի հուշամատյան), Բեյրութ, 1970, հ. 8, թիվ 1–4, էջ 84-85:*

նշանակություն ինչպես Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգների հայության, այնպես էլ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետագա ճակատագրի համար: Գեներալ-մայոր Հակոբ Բագրատունին, որն այդ օրերին գտնվում էր Բաքվում, կարևորելով Բաքվի ինքնապաշտպանությունը, գրել է. «…Բաքվի ինքնապաշտպանությունը ուներ մեծ նշանակություն Ռուսաստանի սահմանները պաշտպանելու գործում, բայց հատկապես բացառիկ է նրա ունեցած նշանակությունը հայության գոյության համար: Ինձ համար այլևս պարզ էր, որ, գրավելով Բաքուն (հայի համար իրենց բոլոր հետևանքներով), թուրքերը հետևողականորեն կանդրադառնան բնաջնջումից զերծ մնացած հայկական վերջին շրջաններին՝ Ղարաբաղին և Երևանին, որ կնշանակեր մեր ժողովրդի ֆիզիկական կործանում, լրիվ վերացում…»[2]: Ահա վերոնշյալ հանգամանքներից ելնելով էլ՝ Բաքվի Հայոց ազգային խորհուրդը (նախագահ, ՀՅԴ անդամ Աբրահամ Գյուլխանդանյան) ու ՀՅ դաշնակցության Բաքվի «Ոսկանապատի» կենտրոնական կոմիտեն հրաժարվել էին ճանաչել Բաթումի հաշտության պայմանագրի 11-րդ կետը, որով Բաքու քաղաքից անհապաղ դուրս պետք է բերվեին հայկական ազգային զորամասերը՝ Բաքվի կոմունայի պաշտպանների հիմնական կորիզը[3]: Այսպիսով, Բաքվի պաշտպանությունը մի հուսահատ փորձ էր՝ կանգնեցնելու թուրքական հրոսակների առաջխաղացումը: Հայության գոյությունը պաշտպանելու գերխնդիրը լուծելու համար Բաքվի Հայոց ազգային խորհուրդն ու ՀՅ դաշնակցությունը ինքնապաշտպանության սկզբնական շրջանում համագործակցեցին Բաքվում Ստ. Շահումյանի գլխավորությամբ հաստատված բոլշևիկյան իշխանության (Բաքվի կոմունա) հետ: Քաղաքական այդ երկու ուժերի զինական համագործակցությանը հետևյալ հիմնավորում է տվել Մ. Վարանդյանը՝ գրելով. «...Հ.Յ.Դաշնակցությունը–ազգային պաշտպանության գերագույն մտահոգությամբ–որոշեր էր միանալ ռուս բոլշևիկներուն և Ռոստոմ ու Շահումյան, հակառակ գաղափարային խորունկ տարաձայնությանց, կը գործեին թև թևի»[4]: Բաքուն գրավելու դեպքում սպասվում էր հայ բնակչության կոտորած: Այդ իսկ պատճառով էլ Բաքվի պաշտպանությանը մասնակցում էր քաղաքի գրեթե ողջ հայությունը՝ անկախ կուսակցական պատկանելությունից և քաղաքական համոզմունքներից: Իրավացի էր Բ. Իշխանյանը, երբ գրում էր. «Հայկական տարրը ավելի քան որևէ մի ուրիշը Բագվում, գերազանցապես շահագրգռված էր քաղաքի պաշտպանությամբ. դա հայության համար կյանքի ու մահվան հարց էր»[5]: Բաքվի պաշտպանության գործին էր զինվորագրվել նաև այդ օրերին Բաքվում գտնվող մեծանուն լեզվաբան Հր. Աճառյանը, որը բանակի շտաբում ստանձնել էր թարգմանչի աշխատանքը[6]:

---

[2] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 49, 53:*

[3] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, հ. 2, Բեյրութ, 1967, էջ 337:*

[4] *Մ. Վ ա ր ա ն դ յ ա ն. Մուրատ (Մեբաստցի ռազմիկին կյանքն ու գործը), Պոսթըն, 1931, էջ 326:*

[5] *Բ. Ի շ խ ա ն յ ա ն. Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրություն սեպտեմբերյան անցքերի, Թիֆլիս, 1920, էջ 2:*

[6] *Ռոստոմ. Մահվան 60-ամյակի առթիվ, Բեյրութ, 1979, էջ 391:*

Նախապատրաստվելով դիմակայել թշնամուն՝ Կովկասյան կարմիր բանակը ներկայացնում էր հետևյալ պատկերը: Այն կազմված էր 4 բրիգադից և մտնում էր Կովկասյան կարմիր բանակի 1-ին կորպուսի մեջ: 1-ին բրիգադի հրամանատարն էր գնդապետ Ն. Ղազարյանը, 2-րդինը՝ գվարդիայի փոխգնդապետ Բեգ-Զուրաբյանը, 3-րդինը՝ Հ. Սրվանձտյանցը, 4-րդինը՝ փոխգնդապետ Հարությունովը: Բանակի հրամանատարն էր ռազմածովային կոմիսար Գրիգոր Ղորղանյանը (Կորգանով), շտաբի պետը՝ գնդապետ Զ. Ավետիսյանը, մատակարարման բաժնի պետն էր Մ. Տեր-Պողոսյանը: Կորպուսը բաղկացած էր 26 գումարտակից (յուրաքանչյուրում 4–500 մարդ) և շուրջ 20.000 զինվորից, հրամանատարների մեծ մասը հայեր էին: Կորպուսում գերակշռում էին հայ զինվորները, որոնք հիմնականում Արևմտյան ճակատից վերադարձած զանգեզուրցիներ, արցախցիներ, Գանձակի, Երևանի, Շամախու և Գյոքչայի հայկական գյուղերից հավաքագրված երիտասարդներն էին, մասամբ նաև մշեցիներ և սասունցիներ, որոնց ընդհանուր թիվը հասնում էր 15–16.000-ի[7]: Ավելի որոշակի, գումարտակները հիմնականում կազմվել էին հայրենակցական սկզբունքով: Ստեղծվել էին Ելիզավետպոլի, Երևանի և Զանգեզուրի անունները կրող հայրենակցական գումարտակները: Բանակում միայն ՀՅԴ վաշտի մարտիկների թիվը հասնում էր 6–700-ի (հրամ.՝ Գ. Բալայան): Զորքի համալրմանն իր մասնակցությունը բերեց նաև ՍԴ հնչակյան կուսակցությունը: Հնչակյան հին գործիչ Տիգրան Ղազանչյանի (Պերճ Մուշեղյան) հրամանատարությամբ կազմվել էր 24-րդ գումարտակը[8]: Բաքվի ինքնապաշտպանության նկատմամբ անտարբեր չգտնվեցին նաև Ռուսաստանի տասնյակ համալսարաններում սովորող հայ ուսանողները: Ինչպես՝ Սարատովի հայ ուսանողությունը «Բագու գնացող ուսանող կամավորներ» խմբով գնացքով մեկնել էր Բաքու և կազմել առանձին վաշտ՝ բաղկացած 200 հոգուց, հայ սպա Չիժովի հրամանատարությամբ[9]: Փոխգնդապետ Հարությունովը հետևյալ բնութագրումն է տվել բանակի կազմին. «Միայն դրոշն էր բոլշևիկյան, իրականում հայ զինվորները կազմում էին 95% և գրեթե 100% հայ սպաներ, որովհետև մեր նպատակները համընկնում էին բոլշևիկների հետ, այդ պատճառով ծառայության էինք մտնում նրանց մոտ»[10]: Փաստորեն, Բաքվի կոմունան հենվում էր առավելապես հայ զորքի վրա: Բաքվի պաշտպանության համար Հայոց ազգային խորհրդին նյութական միջոցներ էին տրամադրել Աստրախանի, Սամարայի, Ցարիցինի, Աշգաբադի, Կիսլովոդսկի և Մոսկվայի հայկական կոմիտեները[11]:

Թշնամու հարձակումը Բաքվի դեմ կանխելու, միաժամանակ ռազմաճակատը Նուխիի, Արեշի, Գյոքչայի և Շամախու հայահոծ գավառներից հեռացնելու մտադրությամբ Կոմունայի զորքը հունիսի 5-ին Եվլախ–Գանձակի ուղղութ-

---

[7] *Ս. Մ ե լ ի ք - Յ ո ղ չ յ ա ն. Բագուի հերոսամարտը.– «Հայրենիք» (Պոսթըն), 1925, հունիս, թիվ 8, էջ 113: Տե՛ս նաև* А. М н а ц а к а н я н. К истории Кавказской Красной армии (1918 г.).– *ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1968, № 1, էջ 13-14:*

[8] *Տ. Ղ ա զ ա ն չ յ ա ն. Փաստեր պատմության համար.– ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 23, թ. 37-43:*

[9] *Ռ. Խ ո յ լ յ ա ն. 1918 և Բագուի հերոսամարտը.– «Հայրենիք», 1966, մարտ, թիվ 3, էջ 63:*

[10] *ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14:*

[11] *ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 38, թ. 6:*

յամբ անցավ հարձակման: Թուրքական զորքերը Բաքվի դեմ ռազմական գործողություններն սկսեցին հունիսի 15-ին՝ Գանձակի հայ բնակչությունը զինաթափելուց հետո: Քյուրդամիր–Կարամարյան–Գյոքչա ուղղությամբ գործող Համազասպ Սրվանձտյանցի բրիգադին հաջողվեց Կարամարյանի մոտ հունիսի 16–17-ին տեղի ունեցած մարտերում տանել փայլուն հաղթանակ և մինչև հունիսի 26-ը գրավել Կարամարյան–Քյուրդամիր և Զուբովկա–Պետրոպավլովսկ գծերը: Այդ պարտությունից հետո թուրքական հրամանատարությունը ստիպված էր ժամանակավորապես դադարեցնել հարձակումը՝ ուժերը վերադասավորելու համար և կարճ ժամանակամիջոցում, ստանալով նորանոր համալրումներ, կարողացավ վերակազմավորել բանակը ու նախապատրաստվել հետագա գործողություններին: Կարամարյանի հաղթական ճակատամարտից հետո Կարմիր բանակի գերագույն հրամանատարությունը որոշեց գրավել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Գյոքչա քաղաքը, որի հաջող ելքից էր կախված ոչ միայն Բաքվի պաշտպանությունը, այլև Կուրի ձախափնյակի հայահոծ շրջանների հայության հետագա ճակատագիրը:

Հունիսի 27-ից–30-ը Գյոքչա գյուղաքաղաքի մոտ տեղի ունեցած ծանր մարտերից հետո Բաքվի կոմունայի զինված ուժերը, բանակի գերագույն հրամանատարության թույլ տված մարտավարական սխալների և թուրքակ ան մեծաքանակ զորքի հակահարձակման պատճառով, նահանջեցին: Կոմունայի զորքի՝ Գյոքչայի մոտ կրած պարտությունը զրկեց Բաքվի նահանգի հայ ազգաբնակչությանը թուրք-թաթարական միացյալ ուժերից պաշտպանվելու կայուն երաշխիքից[12]: Նահանջի հետևանքով, փաստորեն, ոչ միայն ձախողվեց Բաքվի ինքնապաշտպանությունը, այլև ճանապարհ հարթվեց հայահոծ գավառներում թուրք-թաթար հրոսակների նոր բարբարոսությունների համար: 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ Շամախու գավառում հայերի թիվը 22.350 էր, Գյոքչայի գավառում՝ 17.207[13]:

Կոմունայի զորքի նահանջի ժամանակ նրա հետ տեղահանվեց և դեպի Բաքու սկսեց գաղթել Գյոքչա գավառի հայությունը: Անկազմակերպվածության պատճառով կարողացան գաղթել միայն Դավա-Բաթան ձորի արևելյան մասում գտնվող Նոր Շեն, Շուքուրչի, Գիրք, Գիրք-Կուզրան, Ավանաշեն, Մեծ Գանձակ, Աղբուլաղ, Թուբիշեն, Փաթակլու, Դայմադաղ, Քալբանդ և Քեշխուրդ գյուղերը՝ 12000 բնակչությամբ: Դավա-Բաթան ձորից արևմուտք ընկած գյուղերից հաջողվեց գաղթել միայն Ղալակա, Նորշեն (Խութաշեն, Աշղբայրամ) և Ուշտալ գյուղերի բնակչությանը, որոնք, մինչև Կոմունայի զորքին հասնելը, թուրք-թաթարների հարձակումների պատճառով տվեցին տասնյակ զոհեր: Տեղի ունեցած ընդհարումից հետո Վանքաշենից կարողացան գաղթել 36 բնակիչ՝ 1300-ից, Ռուշանաշեն և Փոքր Գանձակից՝ 60-ը՝ 1000-ից, մնացած գյուղերից՝ 500 հոգի[14]:

---

[12] *Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Թուրքական արշավանքը Բաքու 1918 թ. և Գյոքչայի ճակատամարտը.– «Դրոշակ», 20. V. 1998, թիվ 9, էջ 17-26:*

[13] Кавказский календарь на 1917 г., Тифлис, 1916, с. 179.

[14] *ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 45: Տե՛ս նաև «Մշակ», 30.VII.1918:*

Հայկական մնացյալ գյուղերի բնակիչները, որոնք չէին հասցրել գաղթել, հավաքվեցին Վանք գյուղում և պաշարման մեջ 4 օր շարունակ հերոսաբար դիմադրեցին թուրքերին: Այդ օրերին թեժ մարտեր ընթացան Շամախու գավառի Գյուրջևան գյուղի մատույցներում: Ինքնապաշտպաններին օգնության հասած կանոնավոր բանակի գումարտակներին գյուղի բարձունքների մոտ հաջողվեց դիմակայել թշնամուն և հուլիսի 9-ին ետ շպրտել[15]: Ինքնապաշտպանության դիմեցին նաև գավառի այլ գյուղերի բնակիչները: Այս առումով հիշարժան է Մատրասայի, Քարքանջի, Ազայիշենի (Նորշեն, Սուլթանաշեն), Գիրքի և Ղալակայի գյուղացիների դիմադրությունը: Մատրասայի ինքնապաշտպանական ուժերը, շուրջ 80 հոգով, հուլիսի 19-ի համառ մարտերի արդյունքում կարողացան գյուղից հետ քշել թուրքական զորքերին[16]: Սակայն, ցավոք, հայերի դիմադրությունն այս և մի քանի այլ վայրերում ի վիճակի չեղավ կասեցնել զանգվածային կոտորածները:

Թուրքական զորքը, տիրելով Գյոքչայի գավառին, թաթարական հրոսակների հետ միասին կոտորեց այնտեղ պատսպարված հայերին: Միայն Գյոքչա ավանում սպանվեց 700 հայերի մի մասը, իսկ կենդանի մնացածներին, այդ թվում 50-ից ավելի գեղեցիկ կանանց և աղջիկներին բաժանեցին թաթարական գյուղերում[17]: Այդ ծանր օրերին, հուլիսի 5-ին, Հյուսիսային Պարսկաստանից Բաքվին օգնության եկավ ռուսական գնդապետ Լ. Բիչերախովը՝ շուրջ 1500-ի հասնող կազակային զորախմբով և իր վրա վերցրեց Աղսու–Քյուրդամիր գծի հրամանատարությունը: Հուլիսի 6–7-ը Քյուրդամիրի ուղղությամբ ընթացած մարտերում Կոմունայի զորքին հաջողվում է կասեցնել թշնամու հարձակումը: Ստանալով նոր համալրումներ՝ թշնամին հուլիսի 8-ին վերսկսում է հարձակումը Քյուրդամիր–Կարամարյանի ուղղությամբ: Կոմունայի զորքը, համառ մարտեր մղելով, հուլիսի 10-ին թողնում է Քյուրդամիրը և նահանջում՝ իր հետ տանելով նաև գավառների շուրջ 50 հազարի հասնող տեղահան եղած հայությանը: Տեղահանված ժողովրդի գաղթը ապահով դարձնելու նպատակով առաջացող թուրքական զորքի դեմ պաշտպանողական մարտեր էր մղում 20-րդ գումարտակը՝ Եղիշե Պահլավունու հրամանատարությամբ[18]:

Բաքվի պաշտպանության գործն այդ օրերին դժվարանում էր նաև զինական ուժի, ռազմամթերքի և պարենի պակասության պատճառով: Ռուսաստանից - անհրաժեշտ օգնություն ստանալու նպատակով Ստ. Շահումյանը մի շարք հեռագրեր հղեց Վ. Լենինին: Չնայած վերջինս մշտապես հետաքրքրվել է Բաքվի վիճակով, այդուհանդերձ, Բաքվին զորքով, զենքով և պարենով օգնելու առնչությամբ գերատեսչական մարմինների կողմից հարուցվում էին մի շարք արգելքներ: Հատկապես բացասական դեր են խաղացել ՌՍՖՍՀ ռազմածովային գործերի Ժողկոմ Լ. Տրոցկինն 1918 թ. հուլիսից Հյուսիսկովկասյան օկրուգի Ժողկոմ Ի. Ստալինը, որոնք արգելքներ էին ստեղծում Բաքու ռազմամթերք և

---

[15] *«Արև» (Բագու), 11. VII. 1918:*

[16] *«Արև», 30. VII. 1918:*

[17] *ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 36, թ. 45:*

[18] *Եղիշե Պահլավունի. Հուշամատյան, կազմեց և խմբագրեց՝ Նորայր Պահլավունի, Երևան, 2006, էջ 34-35:*

զորք ուղարկելուն: Լ. Տրոցկին անհետևանք էր թողել դեռևս մայիսի 25-ին Աստրախանից ուղարկված հեռագիրը, որում ծանուցվում էր Բաքվի դրության լրջությունը և խնդրվում էր Կազանի պահեստների սպառազինության հարուստ պաշարներից Աստրախան՝ այնտեղից շտապ Բաքու ուղարկել մեծ քանակությամբ զենք և զինամթերք[19]: Բաքվի Ժողկոմխորհից Լ. Տրոցկուն 1918 թ. հունիսի 3-ին հասցեագրված հեռագրում ուղղակի ասվում էր. «Հեղափոխության առջև պատասխանատվության մեծ ահից պահանջում ենք՝ անհետաձգելի օգնություն զենքով: Տվեք հրացաններ, փամփուշտներ, հրանոթներ: Յուրաքանչյուր ձգձգում հանցագործություն է հեղափոխության հանդեպ: Եթե ժամանակին չտաք օգնություն, դրությունը կինի անուղղելի»[20]: Լ. Տրոցկին այս հեռագիրը դարձյալ թողնում է անհետևանք:

Արգելքներ էին հարուցվում նաև պարենի առաքման գործում: Ի. Ստալինի հրամանով Բաքվի համար նախապատրաստված պարենն ուղարկվել էր Յարիցին: Դեպքերին քաջատեղյակ, Ստ. Շահումյանի քարտուղար Օ. Շատունովսկայան գրում է. «Հյուսիսային Կովկասի շրջաններում Բաքվի համար նախապատրաստված հացը՝ Ի. Ստալինի հրամանով ուղարկվեց Յարիցին»[21]: Վերջինիս հրամանով Յարիցինում կասեցվեց նաև ուկրաինական ռազմաճակատից շուրջ 9000-ի հասնող գնդապետ Գ. Պետրովի զորախմբի մեծ մասի ուղարկումը Բաքու, և հուլիսի 20-ին Բաքու հասան ընդամենը 780 հոգի[22]: Սա թեև մարտունակ ջոկատ էր, սակայն, իբրև օգնություն, շոշափելի չէր: Այս շրջանի իր մի շարք հեռագրերում Ստ. Շահումյանը Վ. Լենինին և Ի. Ստալինին բազմիցս զգուշացնում էր զենքի և զինամթերքի ուշացման, Բաքվին օգնություն կազմակերպելու գործում խոչընդոտող արգելքների մասին: Հուլիսի 20-ի հեռագրում Ստ. Շահումյանը Բաքվի դրության մասին վերջիններիս իրազեկում էր հետևյալը. «Դրությունը դառնում է լուրջ: Բաքվի համար զինվորական ուժերի ուղարկումը պետք է ուժեղացվի և արագացվի: Կարգադրություն արեք, որ տեղական սովետները ճանապարհին չկանգնեցնեն Բաքու ուղարկվող զորամասերին: Հաղորդեցեք՝ կարող ենք օգնություն սպասել և ե՞րբ: Կրկնում եմ, անհրաժեշտ է շուտափույթ և լուրջ օգնություն զորքերով»[23]: Սակայն Բաքվին ռազմական օգնություն կազմակերպելու գործը դարձյալ ուշանում էր: Հուլիսի 26-ին Ստ. Շահումյանն իր անհանգստությունը հայտնելով ռազմական օգնության ուշացման համար՝ Վ. Լենինին և Ի. Ստալինին հեռագրում է. «Թախանձալից խնդրում եմ բոլոր միջոցները ձեռք առնել անմիջապես կանոնավոր զորամասեր ուղարկելու համար: Մեր դեմ կռվում են թուրքական կանոնավոր զոր-

---

[19] Е. Т о к а р ж е в с к и й. Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане. Баку, 1957, с. 104.

[20] *Նույն տեղում:*

[21] О. Ш а т у н о в с к а я. Втеогненныедни– “Коммунист” (Ереван), 20.X.1989.

[22] С. Ш а у м я н. Бакинская Коммуна. Баку, 1927, с. 29. *Տե՛ս նաև Ե. Ս ա ր գ ս յ ա ն. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1918 թ., Երևան, 1964, էջ 404:*

[23] *Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 5 (1918 թ. մայիսի 29–սեպտեմբերի 20), Երևան, 1978, էջ 198:*

քերը, կան գերմանական հրահանգիչներ»[24]: Այս հեռագրի կապակցությամբ Վ. Լենինը հուլիսի 29-ին Աստրախանի վրայով Բաքու՝ Ստ. Շահումյանին պատասխանեց. «Զորքեր ուղարկելու համար միջոցներ ձեռք կառնենք, բայց հաստատապես խոսք տալ չենք կարող»[25]: Այս ամենից հետևում է, որ խորհրդային իշխանությունը, ելնելով Ռուսաստանում և տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական միջազգային նոր զարգացումներից, տեղին և պատշաճ աջակցություն ցույց չտվեց Բաքվի կոմունային: Բաքվի ինքնապաշտպանության հաջողված կազմակերպումը կարող էր էլ ավելի մեծացնել ՀՅ դաշնակցության և Ստ. Շահումյանի գլխավորած հայամետ իշխանության հեղինակությունն ու ազդեցությունը, որով պայմանավորվում էր հայկական տարրի ուժեղացումը Այսրկովկասում, կարևոր մի հանգամանք, որն ամենևին էլ հաճությամբ չէր ընդունվում բոլշևիկյան ղեկավարության կողմից:

Մինչդեռ Բաքվի դրությունը գնալով ծայրաստիճան վատթարանում էր: Այդ ընթացքում Բաքվի զորքը, թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ, ինքնապաշտպանական մարտեր մղելով, հուլիսի 20-ին հանձնեց Շամախին, 22-ին՝ Ալյաթը, իսկ 28-ին՝ Բալաջարը: Թուրքերի առաջխաղացումն ուղեկցվում էր Շամախիի գավառի հայկական գյուղերում և զորքի հետ Բաքու գաղթող հայերի քարավանից ետ մնացածների կոտորածներով: Միայն Շամախի–Մարազա հատվածում զոհ գնացին 1000-ից ավելի գաղթականներ[26]:

Օրհասական այդ ծանր օրերին, երբ վճռվում էր քաղաքի ճակատագիրը, - Ռուսաստանից ռազմական անհրաժեշտ օգնության ուշացման և ուժերի անբավարարության պատճառով, բարձրացավ հյուսիսային Իրանից (Էնզելի) անգլիացիներին Բաքու հրավիրելու հարցը: Անգլիացիներին Բաքու հրավիրելու առնչությամբ հայ հասարակական-քաղաքական ուժերի շրջանում ծավալվեցին թեժ քննարկումներ: Մտահոգ հայության ֆիզիկական գոյության խնդրով, փորձելով Բաքվի պաշտպանության գործում օգտագործել անգլիացիների զինական ուժերը, Բաքվի Հայոց ազգային խորհուրդը, Հ Յ Դ Բաքվի կենտրոնական կոմիտեն, աջ սոցիալիստ-հեղափոխականները (Էսէռ) ու սոցիալ-դեմոկրատ մենշևիկների խմբակցությունները որոշեցին ապավինել անգլիացիների օգնությանը[27]: Ս. Վրացյանի բնորոշմամբ՝ «Դրությունը դառնում էր հուսահատական: Ի՞նչ անել, ու՞մ դիմել: Ռուսաստանից հույս չկար…Մնում էր աղոտ հավանականություն օգնություն ստանալ «երրորդ ուժից»՝ անգլիացիներից…»[28]: Հակառակ սրան, բոլշևիկները, դասակարգային դիրքերից ելնելով, դեմ արտահայտվեցին այդ տեսակետին՝ գտնելով, որ «Բաքվի տերիտորիայում անգլիական զորքերի երևալը նշանակելու է այդ քաղաքի օկուպացիան անգլիական իմպերիալիզմի կողմից և Բաքու քաղաքը կորչելու է Ռուսաստա-

---

[24] *Նույն տեղում, էջ 220:*

[25] *Վ. Ի. Լ ե ն ի ն. ԵԼԺ, հ. 50, Երևան, 1983, էջ 149:*

[26] *«Արև», 30. VII. 1918:*

[27] *Ռոստոմ. Մահվան 60-ամյակի առթիվ, էջ 360:*

[28] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, Գ տպագրություն, Թեհրան, 1982, էջ 168-169:*

նի համար»[29]: Ստ. Շահումյանը, ելույթ ունենալով Բաքվի խորհրդի հուլիսի 16-ի նիստում, հայտարարեց. «Զրկել Ռուսաստանը Բաքվից՝ նշանակում է ամենածանր հարվածը հասցնել նրան: Եթե մենք խոսում ենք Ռուսաստանի անկախության մասին, ապա նավթահանքերը հոժարակամ կերպով անգլիացիներին հանձնելով՝ թերևս մենք ամենամեծ հանցանքն ենք գործում Ռուսաստանի հեղափոխության դեմ»[30]: Տարված լինելով Բաքուն խորհրդային Ռուսաստանի կազմում պահպանելու խնդրով՝ բոլշևիկները մոռանում էին հայ ազգաբնակչությանը սպառնացող մահացու վտանգը: Այս ցավալի մտայնությունը, իհարկե, չէր բխում Բաքվի բազմաքանակ հայ ազգաբնակչության շահերից: Այս առումով ուշագրավ է Դ. Անանունի այն դիտարկումը, թե «Բոլշևիկյան իշխանությունը Բաքվում Ռուսաստանի համար էր աշխատում»[31]: Բաքվի խորհրդի հուլիսի 25-ի արտակարգ նիստը, երբ շարունակում էր անգլիացիներին Բաքու հրավիրելու հարցի քննարկումը, աջ էսէռների, մենշևիկների ու դաշնակցականների 259 ձայնի մեծամասնությամբ ընդդեմ բոլշևիկների, ձախ էսէռների և մի խումբ ձախ դաշնակցականների 236 ձայնի, բանաձև ընդունեց անգլիացիներին հրավիրելու մասին: Այդ որոշման ընդունմանը բոլշևիկները, Ստ. Շահումյանի գլխավորությամբ, դեմ արտահայտվեցին և խորհրդի հուլիսի 31-ի նիստին Ժողկոմխորհը վայր դրեց իր լիազորությունները[32]: Ստեղծվեց «Կասպիական նավատորմի կենտրոնական կոմիտեի և բանվորների, զինվորների, նավաստիների խորհրդի դիկտատուրա» (Ցենտրոկասպիի դիկտատուրա) - կառավարությունը (նախագահ՝ սոցիալիստ-հեղափոխական Մ. Տիվշկով, փոխնախագահ՝ ՀՅԴ անդամ Ալ. Առաքելյան, ռազմածովային կոմիսար՝ գեներալ Հ. Բագրատունի): Դիկտատուրայի զորքի ընդհանուր հրամանատար նշանակվեց գեներալ Դոկուչանը, շտաբի պետ՝ գնդապետ Զ. Ավետիսյանը[33]:

Միաժամանակ, շարունակվում էր թուրքերի առաջխաղացումը դեպի Բաքու, որն ուղեկցվում էր Շամախու գավառի հայկական գյուղերում մնացածների և զորքի հետ գաղթող հայերի կոտորածներով և գերեվարությամբ: Բաքվի - զորքի նահանջի պատճառ դարձավ նաև գնդապետ Լ. Բիչերախովի դավաճանական քայլը, որը հուլիսի 29-ին անակնկալ թողել էր ռազմաճակատի աջ թևը և իր ջոկատով քաշվել Սումգայիթ, այնտեղից՝ Պետրովսկ: Հուլիսի 31-ին թուրքական զորքերն արդեն մոտեցել էին Սումգայիթին, իսկ հյուսիսային խումբը՝ Բիբի-Հեյբաթին[34]: Բաքվի շուրջ ստեղծված այդ օրհասական օրերին, հուլիսի վերջերին Հյուսիսային Կովկասից Աստրախանի վրայով Բաքվի պաշտպաններին օգնության են հասնում անվանի ռազմիկներ Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան), Սեպուհը (Արշակ Ներսիսյան) և Ստեփան Ծաղիկյանը:

Օգոստոսի 1-ին Նուրի փաշան հրաման արձակեց Բաքվի ռազմաճակատում շարունակել հարձակումը՝ նպատակ ունենալով գրավել քաղաքը: Մար-

---

[29] *Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն. ԵԼԺ, հ. 5, էջ 214:*
[30] *Նույն տեղում, էջ 194:*
[31] *ՀԱԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 54:*
[32] *Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն. ԵԼԺ, հ. 5, էջ 218, 229:*
[33] *«Արև», 18.VIII.1918.*
[34] *ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 8-9:*

տերը թուրքական զորամասերի և հայ դիմադրական ուժերի միջև վերսկսվում են օգոստոսի 2-ին: Բաքվի պաշտպանները կռվում էին անօրինակ քաջությամբ: Համախմբելով իրենց ուժերը և գործի դնելով մարտական ողջ կարողությունները՝ նրանք արիաբար պաշտպանվում էին, ձախողելով հակառակորդի բոլոր ձեռնարկումները: Այդ օրվա կռվում քաջաբար զոհվեց զանգեզուրցիների 17-րդ գումարտակի 4-րդ վաշտի հրամանատար Ասլան Սարգսյանը[35]: Օգոստոսի 3-ին թշնամին Բիբի–Հեյբաթի շրջանում կազմակերպեց նոր գրոհ: Նրա թնդանոթները, գնդացիրները և հրացանները հուժկու կրակ թափեցին Բաքվի պաշտպանների վրա: Ռազմաճակատի աջ թևում անօրինակ քաջությամբ կողք կողքի կռվում էին Սեբաստացի Մուրադի և ՍԴ հնչակյան կուսակցության անդամ Պողոս Տեր-Դավթյանի ջոկատները: Բիբի–Հեյբաթի շրջանում թշնամու բարձունքը գրավելու ժամանակ քաջաբար զոհվեց Սեբաստացի Մուրադը[36]: Այդ շրջանում փոփոխական հաջողություններով մարտերը շարունակվեցին նաև օգոստոսի 4-ին: Քաղաքի մատույցներում՝ Սալիանում և Պատամդարում, թեժ մարտեր ծավալվեցին հատկապես օգոստոսի 5-ին՝ լուսաբացին: Բաքվի ուժերին, մեծ կորուստների գնով, հաջողվեց ոչ միայն կասեցնել թշնամու առաջխաղացումը, այլև շրջանցել հակառակորդին և թիկունքից հարվածել նրան: Արդյունքում, թուրքերը, մարտի դաշտում թողնելով շուրջ 1000-ից ավել սպանված, հետ շպրտվեցին Բաքվից ավելի քան 40 կմ հեռու գտնվող Այլաթ կայարան[37]:

Օգոստոսի 4-ին Էնզելիից Բաքվի պաշտպաններին օգնության եկան անգլիական առաջին փոքրաթիվ ջոկատները՝ գնդապետ Ստոքսի հրամանատարությամբ, իսկ ավելի ուշ՝ օգոստոսի 17-ին, Բաքու ժամանեց նաև անգլիական ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Դենստերվիլը[38]: Բաքու ժամանած անգլիական ուժերի ընդհանուր թիվը հասնում էր մոտ 1640 մարդու, որից կռվող ուժ ներկայացնում էր ընդամենը 900-ը:

Շարունակելով Բաքվի ճակատում ռազմական գործողությունները՝ օգոստոսի 5-ի անհաջողությունից հետո թուրքերը, ետ քաշվելով, կենտրոնացան Շաբանդաղ լեռան մոտ և, շրջակա թաթարական գյուղերից ստանալով նոր համալրում, օգոստոսի 29-ին անգլիացիների պաշտպանած ճակատում անցան վճռական հարձակման: Վերջիններս համառ մարտերից հետո թողեցին իրենց դիրքերը: Թուրքերին հաջողվեց սեպտեմբերի 1-ին գրավել նաև Բալախանի, Ռամանի, Սաբունչի, Սուրախան և Խրդալան գյուղերը, որի հետևանքով Բաքուն ամբողջությամբ շրջապատվեց ցամաքից՝ արտաքին աշխարհի հետ կապ պահպանելով միայն Կասպից ծովով: Չցանկանալով այլևս մասնակցել պաշտպանությանը՝ գեներալ Դենստերվիլն ու Կովկասում ֆրանսիական զինվորական առաքելության փորձագետ, փոխգնդապետ Պիեռ-Օգյուստ Շարդինյին

---

[35] *ՀԱԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 30, թ. 1-8: Տե՛ս նաև «Արև», 2.VIII.1918:*

[36] *Ս է պ ո ւ հ. Էջեր իմ հուշերեն, հ. Բ, Պոսթն, 1929, էջ 176:*

[37] *Ա. Գ յ ո ւ լ խ ա ն դ ա ն յ ա ն. Օգոստոս հինգը (մի էջ Բագուի հերոսամարտից).– «Վեմ» (Փարիզ), 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, Ա տարի, թիվ 2, էջ 120:*

[38] *Տե՛ս* Д е н с т е р в и л ь. Британский империализм в Баку и Персии. 1917–1918 гг. (Воспоминания). Тифлис,1925, с. 184,189.

սեպտեմբերի 1-ին Յենտրոկասպիի դիկտատուրային առաջարկեցին Բաքուն հանձնել թուրքերին՝ պատճառաբանելով, թե՛ «Անդրկովկասում թուրքերի և անդրկովկասյան մահմեդականների դեմ գործողություններն իրենց ծրագրի մեջ չեն մտնում»[39]: Հարցը քննարկվեց կառավարության նիստում և մերժվեց, իսկ մինչ այդ շտաբի պետ գնդապետ Զ. Ավետիսովին փոխարինեց անգլիացի գնդապետ Ստոքսը:

Մոտենում էր քաղաքի պաշտպանության վերջին օրը՝ սեպտեմբերի 14-ը, երբ պետք է վճռվեր ինչպես ինքնապաշտպանության, այնպես էլ քաղաքի 100 հազարի հասնող հայ բնակչության հետագա ճակատագիրը: Սեպտեմբերի 13-ի առավոտյան թուրքական հետևակը և նրան միացած տեղի թաթարական ջոկատները Սուրախանի շրջանում անցան հարձակմ ան և մինչև կեսգիշեր Գայլի դրունքի շրջանում ձգտում էին ճեղքել Բաքվի պաշտպանների ճակատը: Դիմադրական ուժերն անձնազոհորեն ջանում էին թուրքերին թույլ չտալ առաջանալ, այդուհան դերձ, չհաջողվեց կասեցնել թվական գերակշռություն ունեցող թշնամու գրոհները և, համառ մարտեր մղելով՝ նրանք սկսեցին նահանջել: Դրությունը բարդացավ նաև նրանով, որ կռվի թեժ պահին, աջ թևի վրա տեղակայված Գ. Բիչերախովի և անգլիացիների (հրամ. կապիտան Բոլլինգտոն) ջոկատները, շտաբի պետ գնդապետ Ստոքսի հրամանով, առանց նախազգուշացման թողեցին իրենց դիրքերն ու մոտեցան նավահանգստին՝ Բաքվից հեռանալու մտադրությամբ: Նրանց էր միացել նաև Կովկասում ֆրանսիական զինվորական առաքելության փորձագետ, փոխգնդապետ Շարդինյին: Այդ անակնկալ և ոչնչով չարդարացված քայլը բացասաբար անդրադարձավ դիրքերում գտնվող հայ զինվորների մարտական ոգու վրա և խուճապ առաջացրեց բնակչության շրջանում: Թերևս, այստեղ իրականացան Ստ. Շահումյանի այն կանխատեսումները, որ անգլիացիներն այնքան էլ շահագրգռված չեն Բաքվի երկարատև պաշտպանության խնդրով: Այս առիթով նա դեռևս Բաքվի խորհրդի հուլիսի 16-ի նիստում հայտարարել էր. «Բայց եթե նրանք (անգլիացիները – Գ. Ս.*) նույնիսկ իրենց ուժերը փոխադրեն, դուք կարծո՞ւմ եք, թե նրանք առաջավոր դիրքեր կգնան, որպեսզի կազմակերպեն Բաքվի լայն պաշտպանություն: Բնավ երբեք»[40]:*

Սեպտեմբերի 14-ին մղված համառ մարտերի հետևանքով Բաքվի պաշտպաններին հաջողվեց կասեցնել քաղաքի գրավումը՝ վաստակելով այն թանկագին ժամերը, որոնք անհրաժեշտ էին հայ բնակչությանը քաղաքից տեղահանելու համար: Ստեղծված իրավիճակից ելք գտնելու համար Յենտրոկասպիի կառավարության գումարած նիստում, որին մասնակցում էր նաև Ռոստոմը (Ստեփան Զորյան), որոշում կայացվեց՝ դադարեցնել դիմադրությունը և քաղաքը հանձնել թշնամուն: Որոշվեց նաև տեղափոխել քաղաքի հայերին ու զինվորներին՝ այդ նպատակով տրամադրելով 60 շոգենավ, որից 20-ը՝ զորքի, 40-ը՝ ժողովրդի համար: Տեղափոխության կազմակերպման աշխատանքները ղեկավարում էր էվակուացիոն հանձնաժողովը, կառավարության անդամ՝ Մ.

---

[39] *ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 68:*

[40] *Ս տ. Շ ա հ ն ւ մ յ ա ն. ԵԼԾ, հ. 5, էջ 193:*

Լեմլեյնի գլխավորությամբ: Քաղաքը դատարկելու գործով զբաղվող հանձնաժողովը առաջին հերթին զբաղվեց շուրջ 600-ի հասնող որբերին Իրան՝ Էնզելի տեղափոխման աշխատանքներով: Այդ պատասխանատու գործը հանձնարարվեց Հր. Ամառյանին, որը բժիշկ Ռուբեն Գյանջունցի հետ ամենայն պատասխանատվությամբ կատարեց այն[41]:

Սեպտեմբերի 15-ի առավոտյան՝ ժամը 6-ին, շուրջ 36 շոգենավեր դուրս եկան բաց ծով և ուղղություն վերցրին նախապես որոշված իրենց ուղղություններով՝ Կրասնավոդսկ, Անդրկասպյան երկիր, Հյուսիսային Կովկաս և Պարսկաստան[42]: «Բոլորն էլ լիքն էին փախստականներով,– գրում է Հր. Ամառյանը,– մեծ ու փոքր, կին ու երեխա, զինվոր ու քաղաքացի: Բոլորն էլ փախչում են: Գնում ենք այդպես խմբով, իրար հետ միասին, կարծես, պար բռնած ծովի վրա, մինչ մեր ետևում վառվում է քաղաքը...»[43]: Բաքվի 100 հազարի հասնող հայ բնակչությունից հնարավոր եղավ տեղափոխել միայն 50 հազարին[44]: Էնզելի մեկնած գաղթահայության մեջ էին նաև Բաքվի Հայոց ազգային խորհրդի և ՀՅ - դաշնակցության կենտրոնական կոմիտեի անդամները: Սեպտեմբերի 15-ին ժամը 12-ին թուրքական զորքերը ներխուժեցին քաղաք: Չնայած Մյուրսել փաշան Նուրի փաշայի անունից Կենտրոնական Կասպիի կառավարությանը, ինչպես նաև դանիական և պարսկական հյուպատոսներին «խաղաղ բնակչության անձնական և գույքի ապահովության երաշխիքներ» էր տվել, այդուհանդերձ, թուրք սպաների ղեկավարությամբ թուրք-թաթար հրոսակները 3 օր շարունակ (15–17-ը) գազանաբար կոտորեցին 30 հազար հայերի[45]: Կոտորածը համընդհանուր էր, ավերն ու թալանը՝ նույնպես: Չխնայվեցին անգամ հիվանդանոցներում գտնվողները և մանկատան երեխաները. վերջիններիս փողոց էին նետել չորրորդ հարկից[46]: Զանգվածային ջարդերին զոհ գնացին նաև հայ անվանի մտավորականներ, այդ թվում՝ բժիշկներ, ինժեներներ, գրողներ, լրագրողներ և մշակույթի գործիչներ: Դեպքերի ականատես, օսմանյան բանակի գերմանացի սպա Է. Պարակեն հայերի դեմ կատարված ոճրագործությունների մասին գեներալ-լեյտենանտ Ֆոն Զեեքթիին գրել է. «Գազանությունները մեծ մասամբ կատարվում էին տների ներսում: Այդ պատճառով փողոցներում համեմատաբար քիչ դիակներ կային: Դրանք գերազանցապես անկյուններում էին դարսված, այնպես որ հաճախ միայն հոտից կարելի էր իմանալ: Մի տեղում ես իրար վրա դարսած 7 դիակ տեսա, այդ թվում մի քանի երեխա... Գրեթե բոլոր դիակները ծածկված էին կապտուկներով, որոնք առաջացել էին հրացանների խզակոթների հարվածներից և խողխողումներից: Նկուղներից դիահոտ էր փչում»[47]: Բաքվում հայերի ջարդերի մասին Ավստրո-Հունգարիայի ներկայա-

---

[41] *Հ ր. Ա մ ա ռ յ ա ն. Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 346-347:*

[42] *ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 120, թ. 7 (ֆրանսերեն):*

[43] *Հ ր. Ա մ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 349:*

[44] *Տե՛ս Ս. Մելիք-Յոլչյան. նշվ. աշխ., էջ 109:*

[45] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96-99:*

[46] *«Ժողովուրդ» (Թիֆլիս), 18.X.1918:*

[47] *Ա. Մ ա ն ո ւ չ ա ր յ ա ն. 1918 թ. Բաքվի հայկական ջարդերը (ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստրության քաղաքական արխիվի փաստաթղթերը).– ԼՀԳ, 1990, № 6, էջ 84:*

ցուցիչ բարոն Ֆրանկենշտայնը՝ արտաքին գործոց նախարար կոմս Շտեֆան Բուրիանին 1918 թ. հոկտեմբերի 5-ին հղած հեռագրով հայտնում էր հետևյալը. «Հայկական մեծ թաղամասը, որն այցելեցի, ամբողջությամբ կողոպտված էր և լրիվ դատարկ: Բազմաթիվ ապացույցներ ստացա զազանային դաժանությունների՝ հիվանդանոցներում հայ բժիշկների, հիվանդների և երեխաների կոտորածի մասին«[48]: Կոտոր ածները շարունակվեցին Բաքվից ոչ հեռու գտնվող «Նորել եղբ.» ընկերությանը պատկանող բաժնետիրական ընկերության ամառանոցում, ուր կոտորածի ենթարկվեցին այնտեղ ապաստանած 200-ից ավելի հայեր[49]: Կոտորածի օրերին թուրք ջարդարարները առևանգեցին գեղեցիկ հայ կանանց ու աղջիկներին, որոնցից շատերը պատվազրկվեցին: Տասնյակ հայուհիներ բռնությամբ մահմեդականացվեցին՝ դառնալով հարճ կամ ստրկուհի, իսկ նրանցից շատերը, չդիմանալով բռնություններին, ինքնասպան եղան: Ուշագրավ է այն փաստը, որ կոտորածի օրերին, ֆրանսահպատակ ոմն տիկին Պողոսյան, անտեսելով վտանգը, ֆրանսիական կառավարության անունից միջնորդում է Նուրի փաշային՝ ջարդերը կանխելու համար, որի շնորհիվ փրկվում են տասնյակ հայերի կյանքեր: «Տիկին Պողոսյան,– գրում է Փարիզում լույս տեսնող «Հառաջը»,– որ 1918-ին բազմաթիվ հայրենակիցներու կյանքը փրկած է ջարդե, Բագվի մեջ, միջամտելով Նուրի փաշայի և ֆրանսական կառավարության կողմե»[50]:

Ահա մի քանի թվեր, որոնք ցույց են տալիս թուրք-թաթարների գործած զազանությունների պատկերը: Գերիների թիվը 4246 էր, որոնցից 445-ը մահացավ ծեծի և տաժանակիր աշխատանքների հետևանքով, բանտարկվածները՝ 553, բռնաբարվածները՝ 572, առևանգված հայուհիները՝ 1142 հոգի[51]: Զանգվածային կոտորածների հետքերը ծածկելու նպատակով զանազան թաղամասերից հավաքված հայերի դիակների մեծ մասը թուրքական հրամանատարության կարգադրությամբ թափեցին ծովը կամ էլ հրկիզեցին[52]: Հայ բնակչության կրած միայն նյութական վնասների գումարը անցնում էր 1 միլիարդ ռուբլուց[53]:

Ինչ վերաբերում է Բաքվի 26 կոմիսարների ճակատագրին, ապա Անդրկասպյան էսէռական իշխանությունը և անգլիացիները սեպտեմբերի 20-ին, Կրասնովոդսկից 207 վերստ հեռավորության վրա, Ախչա–Կույմա և Պերևալ կայարանների միջև, ավազուտներում, նրանց գնդակահարեցին: Կոմիսարներից 8-ը հայեր էին՝ Ստեփան Շահումյանը, Գրիգոր Ղորղանյանը (Կորգանով), եղբայրներ Արսեն և Թադևոս Ամիրյանները, Սուրեն Հովսեփյանը, Բաղդասար Ավագյանը, Արմենակ Բորյանը և Արամ Կոստանդյանը[54]:

Բաքվում հայերի զանգվածային ջարդերի և դրանում թուրք-թաթարների - պատասխանատվության հարցի առիթով մամուլում բազմաթիվ հոդվածներով

---

[48] *Նույն տեղում, էջ 86:*

[49] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 170-179:*

[50] *«Հառաջ» (Փարիզ), 28.IV.1949:*

[51] *Տե՛ս Բ. Ի շ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 184-185:*

[52] *«Աշխատավոր» (Թիֆլիս), 25. IX. 1918:*

[53] *Բ. Ի շ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 185:*

[54] *Բաքվի 26 կոմիսարների հիշատակին (փաստաթղթեր և նյութեր), Բաքու, 1968, էջ 160-208:*

հանդես է եկել կոտորածների ականատես ռուս բանաստեղծ և դրամատուրգ, պետական պաշտոնյա Սերգեյ Ռաֆալովիչը[55]*: 1918 թ. դեկտեմբերի 3-ին* "Кавказское слово" *լրագրում նա տպագրել է «Ճշմարտություն Բաքվի իրադարձությունների մասին» խորագրով հոդվածը, որում փաստերով ապացուցում է - այն իրողությունը, որ Բաքուն թուրքական զորքերի կողմից գրավվելուց հետո - հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացվել է նախապես ծրագրավորված բնաջնջում ու կողոպուտ*[56]*: Ս. Ռաֆալովիչը վկայում է, որ կոտորածի օրերին Ադրբեջանի կառավարությունը չէր թաքցնում իր այն մտադրությունը, որ - բռնությամբ ցանկանում էր մաքրել Բաքուն հայերից, որպեսզի այն դառնա զուտ մահմեդական քաղաք*[57]*: Այդ իրողությունը փաստվում է նաև այլ վկայություններով: 1921 թ. հոկտեմբերի 6-ին Կ. Պոլսում կայացած Մ. Թոռլաքյանի դատավարության ժամանակ վերջինս մինչ այդ գաղտնի մնացած փաստեր է բերում բաքվահայերի սեպտեմբերյան ջարդերի՝ նախօրոք կազմակերպված լինելու մասին: Այսպես, ջարդերից մի քանի օր առաջ թաթարները խորհուրդ էին - տվել հայերին թողնել հայոց թաղամասերը և հաստատվել կենտրոնական թաղերում: Միաժամանակ, ըստ թաղամասերի, թաթարների կողմից նախապես ճշտվել էին հայերի բնակության հասցեները: Դրանում մեծ դերակատարություն է ունեցել հատկապես Ադրբեջանի Հանրապետության փոստի և հեռահաղորդակցության նախարար Խ. Մելիք-Ասլանովը: Դատավարության ընթացքում հրապարակվեց հայերի ջարդերի օրերին վերջինիս արած հակահայ հետևյալ հայտարարությունը. «Մինչև որ Ատրպեճանի բոլոր հայերը չմաքրենք. մեր գենքը պիտի չթողունք»*[58]*: Հայերի ջարդերի անմիջական ականատեսների ու ժամանակակիցների անհերքելի վկայություններն ու անաչառ գնահատականները հաստատում են այն փաստը, որ հայ ազգաբնակչության ջարդերը կրել են նախօրոք կազմակերպված բնույթ: Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրած իր մենագրության մեջ Բաքվի հայերի ջարդերին անդրադարձել է ցեղասպանագետ պատմաբան պրոֆ. Վ. Տատրյանը: Այս նշանակալից աշխատության մեջ հեղինակը քննարկելով հայերի ջարդերի պատասխանատուների հարցը, համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ այդ հրեշավոր ծրագիրը իթթիհադական պարագլուխների հղացումն էր, որի իրականացմանը աջակցել և գործուն մասնակցություն է ցուցաբերել Ադրբեջանի կառավարությունը*[59]*: Գիտական շրջանառության մեջ դնելով նոր, մինչ այդ գաղտնի մնացած վավերական նյութ, ինչպես նաև քաղվածքներ կատարելով թուրք ականատես-ժամա-*

---

[55] *Ռուս աստիճանավոր Սերգեյ Ռաֆալովիչը նախապես աշխատել է Փարիզում՝ վարելով Ռուսաստանի ֆինանսների նախարարության տեղի գործակալության հատուկ լիազորի պաշտոնը: 1917 թ. դեկտեմբերի սկզբներից մինչև 1918 թ. հոկտեմբերի 20-ը բնակվել է Բաքվում, այնուհետև ժամանակավորապես հաստատվել է Թիֆլիսում (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 152):*

[56] С. Р а ф а л о в и ч. Правда о бакинских событиях...– "Кавказское слово" (Тифлис), 3 (20).XII.1918. *Տե՛ս նաև* А. З а к а р я н. Русский писатель С. Рафалович о сентябрьских событиях в Баку 1918 г.— *ԼՀԳ, 1988, № 2, էջ 48-51:*

[57] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 153:*

[58] *Մ. Թ ո ռ ռ լ ա ք յ ա ն. Օրերուս հետ, Պեյրութ, 2001, էջ 527:*

[59] В. Д а д р я н. История армянского геноцида (этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа). Ереван, 2007, с. 454.

նակակիցների վկայություններից՝ Տատրյանը փաստում է, որ կոտորածի կազմակերպիչներից էր իթթիհադական տեսաբաններից, արևմտահայերի ցեղասպանության գլխավոր հանցագործներից մեկը՝ Բեհաեդդին Շաքիրը, որը Բաքվի գրավումից հետո նշանակվել էր քաղաքի ռստիկանապետ[60]: Վերը բերված փաստերից միանգամայն ակներև է, որ երիտթուրքերն ու մուսավաթականները ռազմական գործողությունների քողի տակ Բաքվում հայերի նկատմամբ իրականացրել են ցեղասպանություն:

Բաքվի նահանգում հայահալած քաղաքականությունը շարունակվեց մուսավաթական Ադրբեջանի գոյության ամբողջ ընթացքում: Պատերազմում Թուրքիայի պարտությունից և թուրքական զորքերի՝ Այսրկովկասից հեռանալուց հետո ադրբեջանական իշխանությունները, առաջնորդվելով «Ադրբեջանը՝ ադրբեջանցիներին» կարգախոսով, շարունակեցին հայերի հալածանքների ու կոտորածների քաղաքականությունը: Հարյուրավոր կանայք և երեխաներ տաժանակիր աշխատանքներ էին կատարում թաթարական գյուղերում: 1918 թ. Օգոստոսի սկզբներին, բերքահավաքի աշխատանքների ավարտից հետո, զինված թաթարները, թուրք պրիստավի գլխավորությամբ, մտնելով Գյոքչայի գավառի Վանք գյուղ, բռնագրավել են կալսված ցորենը, իսկ գյուղացիներին գյուղից դուրս տանելով՝ Իվանովկա գյուղի մոտակայքում գազանորեն սպանել. քչերին է միայն հաջողվել փրկվել: Ականատեսի վկայությամբ, սպանվածների թիվն այնքան մեծ է եղել, որ նրանց դիակները տեղափոխել են 33 սայլով[61]: Կոտորածները զարհուրելի կերպարանք ստացան հատկապես Ղալակայում: Սակայն աշնան սկզբներին, բերքահավաքից հետո թուրք-թաթարները, շրջապատելով գյուղը, սկսել են տներում և փողոցներում անարգել սպանել հայերին: Լուսադեմին գյուղում մնացած հայերին բաժանեցին երեք խմբերի՝ տղամարդ, կին և երեխա: Շուրջ 400 տղամարդու ուղարկեցին Աղսու՝ տաժանակիր աշխատանքի, որտեղ սովից և շոգից էլ մահացան[62]: Ջարդերի և բռնությունների ալիքը շուտով հասավ Ազայիշեն (Նորշեն, Սուլթանաշեն), Շուքուրչի, Թուբիշեն, Քալբանդ, Քեշխուրդ, Ավանաշեն (Ղոշաքենդ), Կարմախան և այլ գյուղեր: Այդ օրերին թաթարական գյուղերում գերության մեջ գտնվող կանանց, աղջիկների ու երեխաների թիվը հասնում էր մի քանի հարյուրի[63]: Թուրք-թաթարների բարբարոսությունները զարհուրելի էին հատկապես Ղալակա և Ուշտալ գյուղերում[64]: 1918 թ. օգոստոսի սկզբներին միայն Գյոքչայի գավառում ավերվել և հրո ճարակ էին դարձել Բզավանդ (50 տուն), Վանք (220 տուն), Ռուշան (100 տուն), Ղալակա (480 տուն), Նորշեն (Խութաշեն, Աշղբայրամ) (120 տուն) և Ուշտալ (135 տուն) գյուղերը[65]:

Յուրատեսակ ճակատագիր էր սպասվում Բաքվում ապաստանած և կոտորածներից փրկված Շամախի ու Գյոքչա գավառների գաղթահայությանը, որոն-

---

[60] *Նույն տեղում:*

[61] *ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 14, թ. 60:*

[62] *ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 50-51:*

[63] *Նույն տեղում, թ. 51-54. Տե՛ս նաև* ” Наше время” (Баку), 22. II. 1919.

[64] *«Մշակ», 4. III. 1919:*

[65] *ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 4, թ. 9:*

ցից 6500-ը Շամախու և 3000-ը Գյոքչայի գավառից էին. Ադրբեջանի ներքին գործոց նախարար Բ. Խան-Ջիվանշիրի հրամանով, 1918 թ. սեպտեմբերի վերջերին նրանց բռնությամբ տեղափոխեցին գավառներ: Տեղահանվածները ցնցոտիների մեջ, գրեթե մերկ, ամբողջ ճանապարհը ստիպված էին անցնել ոտքով, ոտաբոբիկ՝ քարքարոտ ճանապարհներով, առանց նորմալ սննդի: Նրանց մեծ մասն այդպես էլ չհասավ վերջնակետին: Գաղթականներից 1500-ը ճանապարհին սրի քաշվեց թուրք-թաթար ասկյարների կողմից[66]: Գավառներ վերադարձող գաղթահայերի կոտորածները շարունակվեցին նաև հետագայում: Այսպես, միայն Քյուրդամիր կայարանում 1918–1919 թթ. ընթացքում թաթար հրոսակները կոտորեցին 100-ից ավել հայեր:

Հայահալած քաղաքականությունը շարունակվեց նաև 1919 թվականին: Իրավիճակը լարված էր մնում հատկապես Բաքվում: Բանտերը վերածվել էին հայ խաղաղ բնակչության ու ռազմագերիների գերեզմանների: Բաքու քաղաքում թաթարական հրոսակախմբերը իշխանությունների թողտվությամբ բռնի հավաքագրում էին հայ երիտասարդներին և նրանց հարկադրաբար ուղարկում տարաբնույթ ծանր աշխատանքների[67]: Օրհասական պայմանների մեջ էր հայտնվել Բաքվի հայկական որբանոցը, որտ եղ սովից ու հիվանդություններից օրական տասնյակ որբեր էին մահանում[68]:

Սոսկումի պայմաններում էր գտնվում Գյոքչայի գավառի հայ ազգաբնակչությունը: Զինված թաթարների կողմից պարբերաբար հարձակումների էին ենթարկվում Գիրք, Վանքաշեն, Ազայիշեն (Նորշեն, Սուլթանաշեն), Գանձակ, Թուբիշեն, Քալբանդ, Քեշխուրդ, Կարմախան գյուղերի հայերը[69]: Գյոքչայի գավառի բաքվաբնակ հայ գյուղացիների հայրենակցական միության 1919 թ. սեպտեմբերի 19-ին կազմած զեկուցագրից բերենք մի քանի փաստեր: Այսպես՝ Գիրք գյուղում 1919 թ. հունվար–մարտ ամիսների ընթացքում զոհվել են տասնյակ հայեր: Հուլիսին թաթարական զինված ամբոխի կողմից կրկին հարձակման է ենթարկվել Վանքաշեն գյուղը, որի հետևանքով սպանվել են մի քանի հայեր, իսկ փրկվածները պատսպարվել անտառներում: Քեշխուրդ գյուղում 1918թ. հոկտեմբերի 6-ից մինչև 1919 թ. օգոստոսի 20-ը, ոչ լրիվ տվյալներով, սպանվել են ավելի քան 90 հայեր[70]:

Շամախու գավառի Սաղիան գյուղում միայն 1919 թ. մարտի 24-ին սպանվել է 12 հայ, իսկ մայիսի 29-ին Ադրբեջանի Հանրապետության տարեդարձը թաթար ելուզակները «նշանավորեցին» Ադդաշի 21 հայերի գազանային կոտորածով[71]: Հուլիսի 25-ի գիշերը Քոհլուճ գյուղը շրջապատվել է զինված թաթարներով, որոնք սպանել են գյուղացիներին: Ադրբեջանի Հանրապետության խնա-

---

[66] *ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 4, թ. 28:*

[67] *ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 103, թ. 148:*

[68] *ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 79:*

[69] *Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմողներ՝ Ս. Միրզոյան, Ա. Ղազիյան, Երևան, 2003, էջ 399-405:*

[70] *ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 4, թ. 53 :*

[71] *ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 4, թ. 37, նաև՝ ֆ. 223, ց. 1, գ. 92, թ. 37-41, ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 7:*

մատարության նախարարության անտարբերության պատճառով Շամախի քաղաքի որբանոցում պահվող 112 որբերից սովից և տարաբնույթ հիվանդություններից կարճ ժամանակում մահացել են շուրջ 100-ը, իսկ մնացյալները, հայտնվելով փողոցում, նույնպես մահացել սովից[72]:

Ընդհանուր առմամբ, 1918 թ. մարտից 1919 թ. հունիս ընկած ժամանակահատվածում Բաքվում և գավառներում հայ զոհերի թիվը, ոչ լրիվ տվյալներով, անցնում էր 50 հազարից: «Առաջին համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» 1919 թ. մարտին կազմած տեղեկագրի համաձայն՝ 1914–1919 թթ. ընթացքում Շամախու գավառում ավերվել էր 17 գյուղ՝ 2431 տնտեսություն, իսկ Գյոքչայի գավառում՝ 12 գյուղ՝ 1703 տնտեսություն[73]:

Ադրբեջանի իշխանությունների կողմից հայ ազգաբնակչության նկատմամբ բռնություններն ու հալածանքները նոր թափով վերսկսվեցին 1920 թ. սկզբներից: 1920 թ. ապրիլի 11-ին Գյոքչա գավառի թաթարական Բասխալ, Իսմայիլ և այլ գյուղերի թվով 200 զինված հրոսակախմբեր, Շամախու գավառի իշխանությունների թողտվությամբ, հարձակվեցին Գյուրջևան, Հնդար, Քոհլուճ, Քարքանջ ու շրջակա հայկական գյուղերի վրա և կոտորեցին 500 մարդու[74]: Կոտորածը զարհուրելի կերպարանք ստացավ հատկապես Գյուրջևանում, ուր 1918–1919 թթ. ջարդերից հետո դեռ ապրում էին 300 հայեր: Թաթարական Թերջան գյուղի 300 զինված հրոսակներ, ապրիլի 10-ին շրջապատելով գյուղը, գազանաբար սպանում են ավելի քան 120 հոգու, որից հետո գյուղը ենթարկվում է կողոպուտի և ավերածության: Կոտորածները շարունակվում են նաև Գյոքչա գավառի Քեշխուրդ, Թուրիշեն, Գիրք և Քալբանդ հայկական գյուղերում: Հայերի ջարդը զարհուրելի էր հատկապես Գիրք գյուղում, ուր գյուղի քահանա Ալեքսանդր Աբրահամյանցին մորթազերծ անելուց հետո, ռուսական Իվանովկա գյուղում ապաստանած գիրքեցիներից 50 հոգու, որոնք հիմնականում կանայք ու երեխաներ էին, գավառի պրիստավի պահակազինվորները գյուղի ծայրին գտնվող առվի մեջ մորթոտում են[75]: Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի առաջնորդ Բագրատ եպս. Վարդազարյանը՝ Էջմիածնի Սինոդին 1920 թ. սեպտեմբերի 2-ին հղած զեկույցում նշում էր, որ կոտորածներից հետո Շամախու գավառում մնացել է մոտ 3000, իսկ Գյոքչայի գավառում՝ 2500 հայ[76]: Հայաստանի կառավարությունը, մտահոգված Գյոքչա և Շամախի գավառներում տառապող հայերի հետագա ճակատագրով, որոշեց նրանց տեղափոխել Հայաստանի Հանրապետություն, սակայն Ադրբեջանի կառավարությունն արգելեց նրանց ներգաղթը[77]:

1918–1920 թթ. կոտորածներից հետո զգալիորեն նվազել էր Բաքվի նահանգի հայ ազգաբնակչության ընդհանուր թիվը: Համադրելով հայ ազգաբնակչության

---

[72] *ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 4, թ. 31:*
[73] *ՀԱԱ, ֆ. 202, ց. 1, գ. 1271, թ. 25-26:*
[74] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2053, թ. 2:*
[75] "Наше время", 22. IV. 1920.
[76] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2053, թ. 1:*
[77] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 208:*

թվաքանակը նախապատերազմյան և 1922 թ. տվյալների հետ, պարզորոշ երևում են փաստացի կորուստների այն մեծ չափերը, որ պատճառել էին թուրքթաթարները: Մոտավոր հաշվարկով, Գյոքչայի, Շամախու, Ղուբայի, Բաքվի, Լենքորանի և Ջևաթի գավառներում կոտորածներին զոհ էր դարձել ավելի քան 70.186 մարդ, որից միայն 48.673-ը Բաքու քաղաքում: Այլապես, բնականոն ամի պայմաններում հայ ազգաբնակչության թիվը 1922 թ. վերջերին պետք է կազմեր մոտավորապես 140.000- ից ավելի մարդ (նախքան կոտորածներն առկա 127-.318 մարդու դիմաց)[78]: Սա, ըստ էության, 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ տեղի ունեցած հայերի ջարդերից հետո ամենածանր կորուստն էր, որ կրեց Բաքվի նահանգի հայությունն ընդամենը երկու տարվա ընթացքում:

Այսպիսով, Բաքվի հայության ինքնապաշտպանության ընթացքում թեև Բաքուն պաշտպանող զորքին չհաջողվեց իրագործել նախապես մշակված ռազմական ծրագիրը, սակայն, չորսամսյա հերոսամարտի հետևանքով, քաղաքը գրաված թուրքական զորամասերը մեծաթիվ կորուստների պատճառով, գամված մնացին Բաքվի շրջանում: Դրանով իսկ Թուրքիան չկարողացավ օդակել նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը և իրագործել արևելահայությունը իսպառ բնաջնջելու համաթուրքական ծրագրերը:

Այսպիսով, Բաքվի նահանգում 1918–1920 թթ. Թուրքիայի և Ադրբեջանի կիրառած քաղաքականությունը պետք է դիտել որպես 1915–1916 թթ. արևմտահայերի ցեղասպանության շարունակություն, քանզի Հայոց ցեղասպանությունը, որպես քաղաքական հիմնահարց, թե՛ իր աշխարհագրական ընդգրկմամբ (Բաքվից, Նուխ-Արեշից, Լեռնային Ղարաբաղից մինչև Կիլիկիա) և թե՛ պատմական իմաստով համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք է:

РЕЗНЯ И САМООБОРОНА АРМЯН В БАКИНСКОЙ ГУБЕРНИИ В 1918–1920 гг.

ГЕВОРГ СТЕПАНЯН

Р е з ю м е

В годы Первой мировой войны во время нашествия на Баку турецкое командование поставило цель–создание Огузаканского государства. Первым шагом являлось создание нового государства

[78] *ՀԱԱ, ֆ. 149, ց. 1, գ. 46, թ. 2-8, գ. 133, թ. 19, նաև՝ ֆ. 57, ց. 3, գ. 512, թ. 1-2, ֆ. 409, ց. 1, գ. 2634, թ. 1-2:*

“Большой Азербайджан”, на территории, расположенной между Черным и Каспийским морями. Резня армян была частью этой программы. 15 сентября 1918 г. турецкие войска, захватив Баку, вместе с мусаватистскими бандами в течение 3-х дней вырезали 30 тысяч армян. Преступная политика физического уничтожения или насильственного выселения армян продолжалась на протяжении всего периода существования мусаватистского Азербайджана (1918–1920 гг.), в результате чего жертвами стали десятки тысяч армян края. В течение 1918–1920 гг. в Геокчайском и Шемахинском уездах вырезали и насильственно омусульманили и изгнали значительную часть коренного армянского населения губернии. Были разрушены и уничтожены исторические памятники, создаваемые на протяжении тысячелетий. Политика Турции и Азербайджана в 1918–1920 гг. в Бакинской губернии должна рассматриваться как продолжение геноцида западных армян в 1915–1916 гг., ибо геноцид армян как политический вопрос с его географическим охватом (от Баку, Нухи, Ареша, Нагорного Карабаха до Киликии) и историческим смыслом является следствием плана пантюркизма.

MASSACRES AND SELF-DEFENCE OF ARMENIANS IN THE PROVINCE OF BAKU IN 1918–1920

GEVORG STEPANYAN

S u m m a r y

In the years of World War I, during the invasion of Baku Turkish command intended to create a beforehand planned country called “Oguzakan”. The first step was the creation of a new country “Big Azerbaijan” in the territory between the Black and the Caspean Seas. The given program had to be realized on the account of Armenian massacre. On September 15, 1918 Turkish army capturing Baku with the bands of Musavat, during 3 days massacred 30 thousand Armenians. The criminal politics of physical abolishment or the forcible expulsion of Armenians continued during the whole period of Musavat Azerbaijan’s existence (1918–1920), in the result of which there were thousands of Armenian victims. During 1918–1920 in Geokcha and Shamakhi districts the considerable part of Armenian population was slaughtered, Muslimized and ousted. The historical monuments which were created during millenniums were abolished and destroyed. The policy of Turkey and Azerbaijan in the province of Baku in 1918–1920 must be viewed as the continuation of Western Armenians’ Genocide in 1915–1916, because Armenian Genocide as a political question, both geographically (from Baku, Nukhi, Aresh, Karabagh to Kilikia) and in the historical sense is the result of pan-Turkic entire plan.